Next Level սակագնային պլանների թողարկման շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Next Level սակագնային պլանների թողարկման շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները։

1.2. Մասնակցելով խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց։

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինքային միջոցառում։

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ)։

1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում։

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող 18 տարին լրացած այն անձինք, որոնք կբաժանորդագրվեն Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին։

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը։

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է բաժանորդագրվել Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին։

3.2. Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին բաժանորդագրված բաժանորդը կստանա SMS հաղորդագրություն, որտեղ նշված կլինի Խաղարկության՝ իր անհատական կոդը։

3.3. Կոդը կորցնելու դեպքում մինչև խաղարկության ավարտը հնարավոր է անհատական կոդը կրկին ստանալ՝ հավաքելով *467# կամ ուղարկելով դատարկ SMS հաղորդագրություն 467 կարճ համարին։

3.4. Խաղարկությանը չեն կարող մասնակցել այն բաժանորդները, որոնք անցում կկատարեն Կազմակերպչի՝ շարժական հեռախոսակապի այլ սակագնային պլաններից Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին։ Խաղարկության ցանկացած փուլում, այդ թվում՝ մինչև նվերներ ստանալու պահը, Next Level հետվճարային սակագնային պլաններից բացի այլ սակագնային պլանի անցում կատարելու դեպքում դադարեցվում է բաժանորդի մասնակցությունը Խաղարկությանը և վերջինս զրկվում է նվերներ ստանալու հնարավորությունից։

3.5. Խաղարկության մասնակիցներին, Խաղարկության արդյունքների ամփոփման օրվա վերաբերյալ, կուղարկվի լրացուցիչ SMS հաղորդագրություն։ Համապատասխան

տեղեկությունը կտեղադրվի նաև Կազմակերպչի պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

3.6. 3.5-րդ կետում նշված SMS հաղորդագրությունը Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին բաժանորդագրված բաժանորդներին կուղարկվի հետևյալ պայմանների **միաժամանակյա** առկայության դեպքում.

- տրամադրվող ծառայությունները չպետք է լինեն սահմանափակված, կասեցված կամ դադարեցված՝ Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին բաժանորդագրման օրվանից սկսած մինչև SMS հաղորդագրության ուղարկման պահը,
- նշված ժամանակահատվածում չպետք է ունենան չկատարված պարտավորություններ:

3.7. Խաղարկության արդյունքների ամփոփումը տեղի կունենա Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջերում՝ ուղիղ հեռարձակման միջոցով:

3.8. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Randomizer առցանց հարթակի միջոցով:

3.9. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 1000 հոգի:

3.10. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին նվերները կտրամադրվեն հետևյալ պայմանների **միաժամանակյա** առկայության դեպքում.

- տրամադրվող ծառայությունները չպետք է լինեն սահմանափակված, կասեցված կամ դադարեցված՝ Next Level հետվճարային սակագնային պլաններից որևէ մեկին բաժանորդագրման օրվանից սկսած մինչև նվերը ստանալու պահը,
- նշված ժամանակահատվածում չպետք է ունենան չկատարված պարտավորություններ:

3.11. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված բաժանորդները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող հաճախորդների սպասարկման գրասենյակ:

3.12. Հաղթող ճանաչված բաժանորդի կողմից պետք է ներկայացվի իր հեռախոսահամարին ստացված անհատական կոդը և անձը հաստատող փաստաթուղթ:

3.13. Հաղթող ճանաչված բաժանորդի կողմից նվերը անձամբ ստանալու անհնարինության դեպքում նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

3.14. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.15. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անցակցվելու է **2024 թվականի հունիսի 14-ից 2024 թվականի հուլիսի 14-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.5-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկ

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
MacBook Air 15 M2 256GB Silver MQKU3RU/A	1
iPhone 15 128GB Black	3
iPhone 15 Pro 128GB Black Titanium	2
Xiaomi Redmi A3 4GB/128GB	30
HONOR X8b 8GB/128GB Black Titanium	20
Wireless headphones Accessyle Tornado ANC	921
Ninebot KickScooter MAX G30	1
Playstation 5	2
Samsung Galaxy A05 128GB Black	20
	1000

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շ. 8/4,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
հեռախոսահամար՝ +374 (11) 444 444